ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N__**Վ**/106-2025

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

14 հունիս 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝ Վարչապետ (խորհրդի նախագահ)	Ն. Փաշինյան
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (Խորհրդի անդամներ)՝	
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ	Ա. Աթաբեկյան
Փոխվարչապետ	Մ. Գրիգորյան
Վարչապետի աշխատակազմի ղեկավար	Ա. Հարությունյան
Արդարադատության նախարար	Ս. Գալյան
Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	Վ. Վարդանյան
Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ռ. Բաքոյան
Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար	Ա. Հովհաննիսյան
Վճռաբեկ դատարանի նախագահ	Լ. Թադևոսյան
Գլխավոր դատախազ	Ա. Վարդապետյան
Քննչական կոմիտեի նախագահ	Ա. Պողոսյան
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ	Ա. Նահապետյան
Մարդու իրավունքների պաշտպան	Ա. Մանասյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող	Մ. Գալստյան
Պետական վերահսկողական ծառայության ղեկավար	Ռ. Պետրոսյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Գ. Քոչարյան

Խորհրդի անդամ հասարակական կազմակերպություններ՝	
«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ	Ա. Մարտիրոսյան
«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն	Ս. Այվազյան
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար	Ա. Սաքունց
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության փոխնախագահ	Մ. Ատովմյան
«Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող	Դ. Իոաննիսյան
Խորհրդի հրավիրյալ մասնակիցներ՝	
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Լ. Ալեքսանյան
Վարչապետի աշխատակազմի մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության պետ	Լ. Աֆրիկյան
Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ	Ե. Կարապետյան

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Նիստը բացեց՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) նախագահը՝ առաջարկելով սկսել հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստի օրակարգի քննարկումը: Միաժամանակ, սահմանվեց օրակարգային հարցերի քննարկման ընթացակարգը.

Օրակարգային հարց 1

ՏԻՄ ընտրախախտումների վերաբերյալ «Անկախ դիտորդ» դաշինքի և «Ականատես» դիտորդական առաքելության կողմից վեր հանված խնդիրներ, ընտրական հանցագործությունների քննության ընթացք

2. Զեկույցով հանդես եկավ Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը.

Ներկայացրեց վերջին ՏԻՄ ընտրությունների ժամանակ նախաձեռնված քրեական վարույթների քանակի, գործերի քննության ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև վերաբերելի այլ վիճակագրական տեղեկատվություն: Ներկայացրեց Վճռաբեկ դատարանի կողմից ընտրակաշառքի պատժողական քաղաքականության առնչությամբ ընդունված նախադեպային որոշումը:

3. Զեկույցով հանդես եկավ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Ա. Սաքունցը.

Ներկայացրեց «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից 2023 թվականի մայիսին և 2025 թվականի մարտին տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների ընթացքում արձանագրված նախընտրական քարոզչության և քվեարկության օրվա ընթացքում արձանագրված կոռուպցիոն ռիսկեր պարունակող հիմնական խնդիրները և հարուցված քրեական վարույթների ընթացքի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

4. Զեկույցով հանդես եկավ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ս. Այվազյանը.

Ներկայացրեց «Ականատես» դիտորդական առաքելության կողմից ՏԻՄ ընտրությունների շրջանակներում վեր հանված խնդիրները: Մասնավորապես, անդրադարձ կատարվեց ընտրությունների շրջանակներում վարչական ռեսուրսների կիրառման, Կենտրոնական

ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների գործընթացներում օրինականության նկատմամբ վերահսկողության գործիքակազմերի և ատելության խոսքի վերաբերյալ առկա խնդիրներին:

5. Խորհրդի նախագահը ներկայացված խնդիրների հիման վրա առաջարկեց քննարկել հայեցակարգային խնդիրները, մասնավորապես քննարկվեց ընտրախախտումներով քրեական գործերի քննության ժամկետների, ինչպես նաև այդ ժամկետների և ընտրական գործընթացի ժամկետների հարաբերակցության և ընտրության արդյունքների տեսանկյունից դրանց ազդեցության վերաբերյալ հարցերը.

6. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը առաջարկեց սույն խնդրի լուծումը դիտարկել սահմանադրական փոփոխությունների համատեքստում:

2) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Ա. Սաքունցը անդրադարձավ ընտրական գործընթացի շրջանակներում ֆինանսական ապօրինի միջոցների հոսքերին, ինչպես նաև առաջարկեց շեշտը դնել ընտրական հանցագործությունների շրջանակներում պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի վրա: Ներկայացրեց առաջարկներ, որոնք ուղղված են ընտրական գործընթացների բարելավմանը:

3) Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանն առաջարկեց վերոգրյալ խնդրի շրջանակներում դիտարկել ԿԸՀ և ՍԴ լիազորությունների շրջանակի հստակեցման և առկա գործիքակազմերի կատարելագործման հնարավորությունը: Միաժամանակ, առաջարկեց կոնկրետ քրեական գործերի շրջանակներում քննարկումը շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ իրականացնել Խորհրդի նիստից դուրս՝ առանձին ձևաչափով՝ հաշվի առնելով ժամանակի սղությունը:

4) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը առաջարկեց օրենսդրական փոփոխությունների միջոցով բարելավել նաև ընտրական գործընթացում բարեգործության արգելքը խախտելու վերաբերյալ առկա կառուցակարգերը:

5) Մարդու իրավունքների պաշտպանը անդրադարձ կատարեց ընտրական խախտումների քննության վերաբերյալ դատական քննության իրավական առկա կառուցակարգերին:

6) Խորհրդի նախագահը կողմից բարձրաձվեց նաև կուսակցությունների ֆինանսավորման առկա կառուցակարգերի հստակեցման հարցը:

7) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ս. Այվազյանն առաջարկեց դիտարկել առցանց հարթակում կուսակցություններում կատարվող համապատասխան ներդրումների մասին տեղեկատվության հասանելիության հնարավորությունը:

8) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Ա. Սաքունցը առաջարկեց դիտարկել կուսակցությունների ֆինանսավորումը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնելու նպատակահարմարության հարցը:

9) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը առաջարկեց ուժեղացնել կուսակցությունների կողմից իրականացվող ծախսերի նկատմամբ վերահսկողությունը:

10) «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ Ա.Մարտիրոսյանը առաջարկեց դիտարկել ֆինանսավորման նոր աղբյուրների ներդրման հնարավորությունը:

11) Մարդու իրավունքների պաշտպան Ա.Մանասյանը առաջարկեց ուսումնասիրել վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ միջազգային ուղեցույցները և դիտարկել դրանց տեղայնացման հնարավորությունը:

12) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ս. Այվազյանն անդրադարձավ կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության խնդիրներին, կուսակցությունների ֆինանսավորման շրջանակներում վերահսկողության մեխանիզմներին և այլ խնդիրների:

13) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մ. Գալստյանը անդրադառնալով կուսակցությունների ֆինանսական գործունեության թափանցիկության կառուցակարգերին, նշեց, որ 2024 թվականին իրականացված օրենսդրական փոփոխություններով բարձրացված մի շարք խնդիրներին տրվել են լուծումներ:

Ներկայացվեց առկա կառուցակարգերը, առաջարկվեց կուսակցությունների ֆինանսական միջոցների վերահսկողության շրջանակներում ներդնել նաև իրավիճակային հայտարարագրերի ներկայացման պահանջ:

14) Արդարադատության նախարար Ս. Գալյանը, անդրադառնալով բարձրացված խնդիրներին, առաջարկեց ևս մեկ անգամ քննարկել առկա իրավական կառուցակարգերը և ըստ անհրաժեշտության քննարկել օրենսդրական փոփոխություններ իրականացնելու նպատակահարմարությունը և փոփոխությունների հնարավոր շրջանակը:

7. Օրակարգային 1-ին հարցի քննարկման արդյունքներով առաջարկվեց առկա օրենսդրության շրջանակներում միասնական մոտեցումներ ձևավորելու նպատակով՝ մշակել համապատասխան ուղեցույցային փաստաթղթեր հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ, որն ուղղված կլինի կուսակցությունների ֆինանսավորման, նախընտրական քարոզչության շրջանակներում առկա կառուցակարգերի գործնական կիրառության վերաբերյալ հարցերին և կանդրադառնա նաև վարչական ռեսուրսների օգտագործման, կուսակցությունների կողմից թույլատրելի աղբյուրներից ֆինանսական միջոցներ ներգրավելու հարցերին: Առաջարկվեց վերոգրյալ աշխատանքների վերաբերյալ ունենալ հերթական քննարկում 2025 թվականի 4-րդ եռամսյակում (հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներ):

Օրակարգային հարց 2

Գնումների ոլորտում քրեական գործերի ընթացքի, այդ թվում՝ կայացվող որոշումների մասին տեղեկատվության տրամադրում՝ ի ապահովում թափանցիկության

8. Զեկույցով հանդես եկավ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը.

Ներկայացրեց գնումների ոլորտում քրեական գործերի ընթացքի, այդ թվում՝ կայացվող որոշումների թափանցիկության ապահովման համար տեղեկատվության տրամադրման վերաբերյալ վերլուծությունները, խնդրահարույց իրավակարգավորումները և առաջարկեց կատարել օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելով հարցումների հիման վրա հակակոռուպցիոն բնույթի քրեական գործերով և ընտրախախտումների առնչությամբ հարուցված և կարճված գործերով կարճման որոշումների տրամադրում:

9. Զեկույցով հանդես եկավ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Ա. Սաքունցը.

Անդրադարձ կատարեց համայնքային մակարդակում գնումների գործընթացի կոռուպցիոն իրավախախտումներին, պաշտպանության ոլորտի գնումների գործընթացի օրինականության նկատմամբ վերահսկողության մեխանիզմներին, առաջարկեց դիտարկել խորհրդարանական վերահսկողության մեխանիզմներ ներդնելու հնարավորության հարցը:

10. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) Խորհրդի նախագահը անդրադարձ կատարեց քրեական գործերի պատշաճ քննության կարևորությանը, Պետական վերահսկողական ծառայության կողմից գնումների գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության գործիքակազմին և դրա կարևորությանը, խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների ներդրմանը և դրանց կիրառելիության հնարավոր ռիսկերին, հաշվետվողականության համակարգի փոփոխության անհրաժեշտությանը, այն հաշվառմամբ, որ ներառվի նաև քրեական գործերով դատաքննության արդյունքները: Անդրադարձ կատարվեց նաև վերահսկողական մեխանիզմների իրականացման կարևորությանը, լրատվական դաշտի քաղաքականության փոփոխմանը:

2) Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռ. Պետրոսյանը ներկայացրեց Պետական վերահսկողական ծառայության գնումների վերահսկողության վարչության կողմից

2022-2024 թվականներին իրականացված վերահսկողության արդյունքների վիճակագրությունը, քննարկեց օրենսդրական փոփոխությունների միջոցով Պետական վերահսկողության ծառայությանը վերապահվող նոր լիազորության սահմանումը:

3) Փոխվարչապետ Մ. Գրիգորյանը արձանագրեց խիստ վերահսկողական մեխանիզմների սահմանման դեպքում պետական գնումների ինքնարժեքի բարձրացման, գործարար ոլորտի համար հավելյալ ռիսկերի առաջացման խնդիրներին:

4) Վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա. Հարությունյանը անդրադարձ կատարեց կանխարգելիչ գործողությունների կարևորությանը:

5) Քննչական կոմիտեի նախագահ Ա. Պողոսյանը ներկայացրեց դատավարական որոշումների տրամադրման ընթացակարգը, զեկույցով ներկայացված որոշումների տրամադրման ռիսկերը:

6) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Ա. Նահապետյանը ներկայացրեց քրեական գործերի կարճման որոշումների տրամադրման հիմնական նպատակները, քննարկեց որոշակի դեպքերի առթիվ ներկայացված հաղորդումների օպերատիվ ստուգման արդյունքների հրապարակման հարցի խնդրահարույց լինելը: Միաժամանակ առաջարկեց որպես կարճման որոշումների տրամադրման հարցի լուծման այլընտրանք, յուրաքանչյուր ամիս հրապարակել կարճված գործերի ցանկը՝ կարճման հստակ հիմքերով և հիմնավորումներով:

7) Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Ա. Հովհաննիսյանը ներկայացրեց գնումների գործընթացի խորհրդարանական վերահսկողության բավարար գործիքների առկայության մասին, խորհրդարանին վերահսկողական ավելի լայն լիազորությունների տրամադրման դեպում առկա ռիսկերի մասին:

8) Արդարադատության նախարար Ս. Գալյանը ներկայացրեց գնումների գործընթացի օրենսդրության բարելավմանն ուղղված առկա օրենսդրական փոփոխությունների նախագծերը, առաջարկեց դիտարկել համապատասխան մարմինների կողմից որոշումների տրամադրման համար չափորոշիչների սահմանման հնարավորությունը:

9) Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը առաջարկեց իրավասու մարմինների իրազեկվածության բարձրացման ուղղությամբ տանել աշխատանքներ, միևնույն ժամանակ, առաջարկեց ձևակերպել հանձնարարական՝ խնդրի լուծման ուղղությամբ ուսումնասիրություններ իրականացնելու և ինստիտուցիոնալ լուծումներ գտնելու նպատակով:

10) Խորհրդի նախագահը կարևորեց գնումների ոլորտում քրեական գործերի կարճման որոշումների տրամադրման դեպքում անձնական տվյալների պաշտպանության մեխանիզմների անհրաժեշտությունը:

11) Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ա. Աթաբեկյանը առաջարկեց խնդրի լուծումը դիտարկել քրեական դատավարության էլեկտրոնային արդարադատության համակարգի շրջանակներում, որը կապահովի նաև դատավարական որոշումների տրամադրման հարցը՝ օրենսդրությամբ պահպանվող տվյալների հաշվառմամբ:

12) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ս. Այվազյանը բարձրացրեց գնումների գործընթացի օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հարցը:

13) Վճռաբեկ դատարանի նախագահ Լ. Թադևոսյանը դեմ արտահայտվեց որոշակի հանցանքների դեպքում կարճման որոշումների տրամադրման առաջարկին, նշելով, որ այն կհակասի քրեադատավարական օրենդրության տրամաբանությանը, առաջարկեց իրավապահ մարմինների կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունների մեջ առավել մանրամասն տեղեկություններ տրամադրել կոռուպցիոն բնույթի հանցանքների վերաբերյալ:

14) Արդարադատության նախարար Ս. Գալյանը առաջարկեց քրեական դատավարության էլեկտրոնային արդարադատության համակարգի ձևավորման շրջանակներում անդրադառնալ սույն խնդրին և խնդրեց լրացուցիչ ժամանակ տրամադրել այլ եղանակների առավել մանրամասն ուսումնասիրության համար:

11. Խորհրդի նախագահը առաջարկեց քայլեր ձեռնարկել սույն խնդրի լուծման ուղղությամբ:

Օրակարգային հարց 3

Կոռուպցիոն բնույթի քրեական գործերի քննության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղություններով կատարված աշխատանքների ներկայացում

12. Զեկույցով հանդես եկավ Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը.

Ներկայացրեց կոռուպցիոն բնույթի քրեական գործերի քննության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղություններով կատարված աշխատանքների արդյունքները, ներկայացրեց վերաբերելի վիճակագրություն:

13. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) Վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա.Հարությունյանը հարց բարձրացրեց ավարտված գործերի թվաքանակի, ներկայացված վիճակագրական տվյալների վերաբերյալ, առաջարկեց կարճված գործերի վիճակագրությունը վարել ավելի մանրամասն եղանակով:

2) Փոխվարչապետ Մ.Գրիգորյանը հարց բարձրացրեց արգելադրված գումարների շրջանակներում պետության և ֆինանսական կառույցների միջև առկա փոխհարաբերությունների բնույթի վերաբերյալ:

3) Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ.Վարդանյանը հարցադրման եղանակով անդրադարձավ քրեական գործերի կարճմանը, դրանց հիմքերին, գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ առկա կառուցակարգերին:

4) Արդարադատության նախարար Ս. Գայյանը հետաքրքրվեց 2018-2020 թվականներին հարուցված քրեական վարույթների ընթացքից:

5) Ներկայացված զեկույցի շրջանակներում Խորհրդի անդամների, խորհդրի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից հարցեր ուղղվեցին զեկուցողին նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առկա կառուցակարգերի, Սահմանադրական դատարանի կողմից 2025 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1776 որոշման՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի վերաբերյալ ազդեցության, բռնագանձված գույքի կառավարման մեխանիզմների, պետական շահերի պաշտպանության գործերի արդյունքների վերաբերյալ:

6) Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը, անդրադառնալով բարձրացված հարցերին, նշեց, որ հետագայում կկատարելագործվի քրեական գործերով վարվող վիճակագրությունը՝ ուշադրություն դարձնելով նաև կարճված գործերի առանձնահատկություններին: Անդրադարձ կատարվեց նաև գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ առկա կառուցակարգերին, ներկայացվեց այդ մասով առկա իրավակիրառ պրակտիկան: Անդրադարձ կատարվեց քրեական գործերի քննության ընթացքին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առկա կառուցակարգերին և բարեփոխումներ պահանջող ուղղություններին, Սահմանադրական դատարանի կողմից նշված ինստիտուտի վերաբերյալ ընդունված որոշման շրջանակներում տարվող աշխատանքներին: Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը առաջարկեց լրացուցիչ աշխատանքային քննարկում կազմակերպել Փոխվարչապետ Մ.Գրիգորյանի հետ արգելադրված հաշվիների վերաբերյալ:

14. Ելույթներով հանդես եկան.

1) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Ա. Նահապետյանը ներկայացրեց Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող գործերով վիճակագրությունը:

2) Արդարադատության նախարար Ս. Գալյանը ներկայացրեց ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի տնօրինման միջազգային փորձը, ապօրինի ծագում ունեցող գույքի գործերի մեծ քանակի և դրանց հետագա արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ռեսուրսների մասին հարցը:

3) Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ա. Աթաբեկյանը ներկայացրեց դատարաններում առկա ծանրաբեռնվածության, այդ թվում՝ Հակակոռուպցիոն դատարանում դատավորների ծանրաբեռնվածության վերաբերյալ տեղեկատվությունը:

4) Փոխվարչապետ Մ.Գրիգորյանը ներկայացրեց փողերի լվացման շրջանակներում հանցավորության դեմ պայքարի առանձնահատկությունները:

5) Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը հանդես եկավ եզրափակիչ ելույթով, խնդրեց համապատասխան հանձնարարականներ ձևակերպել ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի կառավարման մեխանիզմների լավարկման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերը դատարանում քննելու սեղմ ժամկետների, պետական և համայնքային շահերով ներկայացված հայցերով գործերի ընդդատության և բռնագանձված գույքերի արժեքների որոշման վերաբերյալ:

15. Խորհրդի նախագահն առաջարկեց Գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանին գրավոր տեսքով ներկայացնի այն հարցերի շրջանակը, որոնց շուրջ ակնկալվում են համապատասխան հանձնարարականները:

Օրակարգային հարց 4

Ազդարարման համակարգի զարգացման ոլորտում կատարված աշխատանքների ներկայացում և առկա խնդիրների քննարկում

16. Զեկույցով հանդես եկավ Արդարադատության նախարար Ս.Գայյանը.

Ներկայացրեց ազդարարման համակարգի զարգացման ոլորտում կատարված աշխատանքները, ազդարարման համապետական իրազեկման արշավի շրջանակներում իրականացված աշխատանքները, դրանց արդյունքում գրանցված ազդարարման հաղորդումների դրական դինամիկայի վերաբերյալ տեղեկատվությունը:

17. Զեկույցով հանդես եկավ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության փոխնախագահ Մ. Ատովմյանը.

Ներկայացրեց Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում նախատեսված իրավական բարեփոխումների և մշակված նախագծերի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացված աշխատանքները, ինչպես նաև «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից մշակված մեթոդական ձեռնարկների, ուղեցույցների, ազդարարման համապետական արշավի շրջանակներում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

18. Զեկույցով հանդես եկավ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Ս.Այվազյանը.

Ներկայացրեց ներպետական օրենսդրության առկա խնդիրները միջազգային չափանիշների համապատասխանության տեսանկյունից և համապատասխան առաջարկություններ առկա խնդիրների հաղթահարման ուղղությամբ:

19. Զեկույցով հանդես եկավ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ.Իոաննիսյանը.

Ներկայացրեց ազդարարման համակարգի նկատմամբ հանրային վստահության վերաբերյալ առկա սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները, հանրային վստահության համատեքստում առկա խնդիրները, ինչպես նաև առաջարկություններ այդ խնդիրները հաղթահարելու ուղղությամբ:

20. Խորհրդի անդամների կողմից ազդարարման համակարգի վերաբերյալ առկա միջազգային կառուցակարգերի, դրանց ներպետական կիրառելիության, ազդարարների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ հարցեր ուղղվեցին զեկուցողներին:

21. Ելույթներով հանդես եկան.

1) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Ա.Սաքունցը, որի շրջանակներում անդրադարձավ ազդարարման համակարգի, ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների կարևորությանը:

2) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Ա. Նահապետյանը ներկայացրեց Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից գործարկված թեժ գծի, դրա շրջանակներում ստացված հաղորդումների քանակի մասին տեղեկատվություն:

3) Մարդու իրավունքների պաշտպան Ա.Մանասյանը անդրադարձ կատարեց ՄԻՊ առկա ռեսուրսներին՝ ինչպես ազդարարման համակարգի շրջանակներում ՄԻՊ լիազորությունների իրականացման, այնպես էլ ՄԻՊ այլ լիազորությունների շրջանակներում:

4) Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ.Վարդանյանը խոսեց ազդարարման համակարգի դերի, “Actio popularis” ինստիտուտի մասին:

5) Արդարադատության նախարար Ս.Գալյանը հանդես եկավ եզրափակիչ ելույթով, կարևորեց ազդարարման ինստիտուտի շարունակական զարգացումը, առաջարկեց ազդարարման համակարգի հետագա բարելավման նպատակով վեր հանված խնդիրների հիման վրա անցկացնել լրացուցիչ քննարկում շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

22. Խորհրդի Նախագահը հանդես եկավ եզրափակիչ ելույթով և հայտարարեց, որ Խորհրդի հաջորդ նիստը տեղի կունենա 2025 թվականի 4-րդ եռամսյակում (սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ